ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

29 նոյեմբերի 2023թ. թիվ 1435

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 7-րդ մասի 1-ին կետով սահմանված դրույթներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2024 թվականին իրականացվելիք շինարարական աշխատանքների գնումների գործընթացի պատասխանատու ստորաբաժանում սահմանել մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2024 թվականին իրականացվելիք ապրանքների և ծառայությունների գնումների գործընթացի պատասխանատու ստորաբաժանում սահմանել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունը:

3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2024 թվականին իրականացվելիք աշխատանքների, ապրանքների և ծառայությունների գնումների գործընթացի գնումների համակարգող նշանակել ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

29/11/23

X

ՀԵՂԻՆԵ ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

Հ.ՀԱԼԻՎՈՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 29
ք.Վանաձոր